ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1962 Общественные науки

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

17.VI 1879—24.VI 1962 ԹԹ.

Հեռավոր Նեղոսի ափերից մեծ վշտով լսեցինք հայագետ Արշակ Ալպոյաճյանի մահվան գույժը։

Արշակ Ալպոյաճյանը սկսած իր վաղ երիտասարդական տարիներից մինչև իր ծերունազարդ հասակի վերջին շունչը, բացառիկ անձնվիրությամբ և հայրենասիրությամբ տոգորված միշտ մնաց պատնեշի վրա և նորանոր արժեքավոր գործերով իր նպաստը բերեց հայագիտության զարգացման գործում։

Ալպոյաճյանը ծնվել է Կոստանդնուպոլսի Սկյուտար թաղամասում, կեսարացի ընտանիքում 1879 թ. հունիսի 17-ին և իր ուսումը ստացել նախ Պերպերյան և ապա Կենտրոնական կոլեջներում։ Ալպոյաճյանը աշակերտել է այն ժամանակվա ամենահայտնի մտավորական-ուսուցիչների՝ նշանավոր մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի, բանաստեղծ Հովհաննես Սեթյանի, բանասեր Հրանդ Ասատուրի, գրաբարագետ Հակոբ Տուրգենի, գրող Մելքոն Կյուրճյանի (Հրանդ) և ուրիշների մոտ։ Ալպոյաճյանը իր մեծ հմտությունն ու մտավոր անսպառ պաշարը կուտակել է շնորհիվ իր հազվագյուտ պրպտողի անսահման եռանդին և մեծ նվիրվածության։

Նա շուրջ կես դար եղել է անձնվեր մանկավարժ և հայրենասիրական ջերմ շնչով թրծել բազմաթիվ սերունդներ։ Ալպոյաճյանը միևնույն ժամանակ եղել է նաև հասարակական անխոնջ աշխատող։ Նա հազիվ 19 տարեկան էր, երբ մուտք գործեց հայ հրապարակագրության մեջ։ Այս ասպարեզում նա աշակերտել է հայտնի հայ հրապարակագիր Բյուզանդ Քեչյանին, որի հիմնադրած «Բիզանդիոն» օրաթերթի գլխավոր դեկավարներից մեկը եղել է նաև ինքը (1908—1918 թթ.), իսկ Կահիրեում խմբագրել և հրատարակել է «Ազատ միտք» շաբաթաթերթը (1936—1937 թթ.)։ Ալպոյաճյանը աշխատակցել է մեծ թվով ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ թերթերի և հանդեսների։ Հրատարակել է Կոստանդնուպոլսի Ազգային հիվանդանոցի մի շարք տարեգրքերը (1908, 1909 և 1910 թթ.) և գործակցել Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ներին։

Արշակ Ալպոյաճյանը բազմավաստակ գիտնական է։ Ավելի քան 60 տարի շարունակ այս ասպարեզում է, որ մասնավորապես փայլեց հայ ժողովրդի հին թե նոր պատմության մշուշապատ մասերը խուզարկելու, համադրելու և կյանքի կոչելու նրա մեծ հմտությունն ու եռանդը։

Իր թողած գիտական հարուստ ժառանգության մեջ Ալպոյաճյանը հանդես է եկել բազմապիսի հատկություններով։ Նա պատմաբան և բանասեր էր, հմուտ աշխարհագրագետ, անաչառ կենսագրող, ազգագրության մասնագետ, հայ մշակույթի և հայ տպագրության լավագույն գիտակ, մի խոսքով, ինչպես արդարացի կերպով նշել է Ալպոյաճյանի մասին հայագիտության անվանի մշակ Հրաչյա Աճառյանը, «բազմահմուտ և բազմավաստակ» մի ականավոր գիտնական։

Նա առաջին հերթին կենսագրական լուրջ ուսումնասիրություններով էր, որ մուտք գործեց հայագիտության մեջ։ «Սրբուհի Տիսաբ» (տպ. Վենետիկ, 1901 թ.), «Գրիգոր Զոհրապ, իր կեանքը և իր գործը» (Կ. Պոլիս, 1919 թ.), «Մինաս Չերազ, իր կեանքը և իր գործը» (Կահիրե, 1927 թ.), «Գրիգոր Պատրիարք և իր ժամանակը» (Երուսաղեմ, 1936 թ.), «Թորգոմ պատրիարք Գուշակեան» (Կահիրե, 1940 թ.), «Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապեշիստան ԺԷ

դարունն» (Կահիրե, 1946 թ.) և դեռ առանց հիշելու նման բնույթի իր անտիպ գործերը և թերթերում օրը օրին նրա գրած «Անհետացող դէմքեր»-ի շարքը, որտեղ կենսագրություններն են կուտակված վերջին 60 տարիների արևմտահայ հայտնի գործիչների՝ հագեցված բացի փաստական հարուստ տվյալներից նաև հեղինակի անձնական տեղեկություններով և անաչառ վերլուծություններով։

Մեծ է հատկապես նրա վաստակը իբրև հայ գաղթավայրերի պատմության մասնագետի. այս ասպարեզում նա մեզ թողել է մի հսկա ժառանգություն, որը իր ընդգրկման ծավալով իր նախընթացը չունի։ Ալպոյաճյանը դեռ 21 տարեկան էր, երբ գրեց այս շարքի իր անդրանիկ գործը «Հայք ի Ռումելիի» վերնագրով, որը 1905 թ. արժանացավ Իզմիրյանց գրական Ա. մրցանակին։

Ալպոյաճյանի կյանքի իմաստը հանդիսացել է աշխատանքը։ Նա չի դադարել ստեղծագործելուց նույնիսկ հայաջինջ սպանդի օրերին, երբ վտանգ էր սպառնում իր կյանքին։ Նա իր կուտակած անսպառ պաշարի վրա խարսխեց իր նշանավոր գործերը, որոնց թվարկումն իսկ բավական է ակնածանք ու զարմանք պատճառելու և կարծել տալու, որ հայագետների մի ամբողջ խումբ է աշխատել տարիներ շարունակ այդ բոլորը իրագործելու համար։

«Պատմութիւն Հայ Կեսարիոյ» Ա և Բ հատորներ (Կահիրե. 1937 թ., շուրջ 2500 էջ մանրատառ), «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց» (Կահիրե, 1952 թ., մոտ 1900 էջ), «Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը և հայերը» (Կահիրե, 1960 թ., շուրջ 400 էջ), «Պատմութիւն Մալաթիոյ Հայոց» (Կահիրե, 1961 թ., շուրջ 1600 էջ), «Յուշամատեան Կոտինահայերու» (Բեյրութ, 1961 թ., 231 էջ) և այլ նման տիպի գործեր, որոնց մի մասը դեռևս անտիպ է մնում. նա ստեղծել է հիմնվելով հայ, օտար և հատկապես անտիպ աղբյուրների վրա և դրանք վեր է ածել անփոխարինելի հանրագիտարանների, նվիրված ոչ միայն տվյալ վայրի հայ կյանքին, այլև բովանդակ հայ պատմության։ Նա իր գործերը մեծ մասամբ գրել է առանց այդ վայրերը տեսնելու, սակայն այդ պակասը լրացրել է հարուստ նյութերի հավաքումով։ Նա կատարել է գիտական ուղևորություններ դեպի ամենակարևոր մատենադարանները, զանազան վերապրողներից փրկել անտիպ նյութեր, հուշագրություններ և այլն։ Հանրագիտարանային բնույթի իր գործերը ընդգրկում են տվյալ գավառի աշխարհագրությունը, պատմական անցյալը, թեմական կյանքը, հուշարձանները, լուսավորությունը և մշակույթը, հայերի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքը, գավառի ազգագրությունը, լեզուն, սովորությունները, բանահյուսությունը, տվյալ գավառում գրված և աշխարհով մեկ ցրված հայերեն ձեռագրերի մասին տեղեկություններ և նրանց հիշատակարանները, այդ վայրից հայերի տարածումը աշխարհի չորս կողմը, Հայաստանում հիմնադրված նույնանուն ավանների կյանքը և վերջապես նույն գավառից սերող ու միջազգային, ինչպես նաև ազգային ասպարեզներում և զանազան երկրներում գործող նշանավոր հայերի կենսագրությունները։ Հիշյալ պատկառելի հատորները թուրքական հայաջինջ սպանդին զոհ գնացած և վաղուց լռության մատնված հայաբնակ մի շարք գավառների հուշամատյաններ են, որոնք կոչված են թանկագին ատաղձներ լինելու հայ ժողովրդի ընդհանուր պատմության։

Ալպոյաճյանի «Պատմութիւն հայ գաղթականութեան» վերնագիրը կրող համագրական աշխատության մեջ առաջին անգամ ի մի է բերվել ամբողջ աշխարհում ստեղծված հայկական գաղթավայրերի պատմությունը։ Արդեն լույս են տեսել երեք ստվար հատորներ (Կահիրե, 1941, 1955, 1961 թթ., շուրջ 1700 էջ)։ Երրորդ հատորի Բ մասը, որքան մեզ հայտնի է, պատրաստ է տպագրության։

Ուշագրավ է Ալպոյաճյանի «Պատմութիւն հայ դպրոցին» երեք հատորանոց աշխատությունը, որի առաջին հատորը լույս տեսավ 1947 թ., իսկ երկրորդը արդեն հանձնված է տպագրության։ Դարձյալ իր նախընթացը չունեցող գործ է նաև հեղինակի «Պատմական Հայաստանի ներքին և արտաքին սահմանները» (Կահիրե, 1950 թ.) աշխատությունը։

Շատ մեծ թիվ են կազմում Ալպոյաճյանի կողմից զանազան հանդեսների մեջ տպագրված ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հայ երաժշտությանը, հայ գրականությանը, վիճակագրությանը, հայ տպագրությանը, պոլսահայ գրադարանների և հայ ընկերությունների պատմությանը, անհետացող հայ գաղթավայրերի անցյալին և այլ հարցերին։

Ինչքան պատկառելի է Ալպոյաճյանի տպագիր վաստակը, նույնքան բազմաբովանդակ է և հարուստ նրա թողած անտիպ ժառանգությունը։ Նա ավելի քան քսան ծավալուն մենագրություններ ունի տպագրության համար պատրաստ վիճակում։ Այդ գործերից են. «Հայերը բիւզանդական երկիրներու մէջ», «Հայք ի Ռումելիի», «Հայերը Պոնտոսի մէջ», «Հայերը Պրուսայի մէջ», «Հայերը Իրանի մէջ», «Հայերը Իրաքի մէջ», «Հայերը Տրապիզոնի մէջ», «Ֆրանսա և Հայաստան», «Հարիւրամեայ պատմութիւն ս. Փրկչեան Ազգ. հիւանդանոցի հայոց Կ. Պոլսոյ», «Տպագրութեան արուեստը և Հայք», «Հայոց պատմութիւն» (բարձրագոյն դասընթացք), «Ժամանակակից Հայ ազգ. Պատմութիւն», «Պատմութիւն

հայ ազատագրութեան» (2000 էջ), «Պատմութիւն հայ քաղաքակրթութեան», «Պատմութիւն հայ իմացական շարժման», ինչպես նաև կենսագրական ուսումնասիրություններ՝ նվիրված արևմտահայ հայտնի հրապարակագիրներ և գրողներ՝ Կարապետ Փանոսյանի, Կարապետ Ութուճյանի, Արմենակ Հայկունու, Բյուզանդ Քիչյանի, Վահան Թեքեյանի և ուրիշների մասին, «Անհետացող դիմքեր» և այլ գործեր։

Արշակ Ալպոյաճյանը իր հայրենիքի ջերմ կարոտով տոչորվող հայրենասեր էր։ Նրա մեծ իղձն է եղել տեսնել իր երազած հայրենիքը։ Ցմեռած Հայաստանը անդամ մը տեսնել», այսպես է դրել իր նամակներից մեկում մեծանուն գիտնականը։ 1958 թ. հոկտեմբերին իրականացավ նրա տարիներ շարունակ փայփայած երազը, նա կարճ ժամանակով եղավ հայրենիքում և ի տես նրա հսկա վերաշինության ու գիտության և մշակույթի ապրած աննախընթաց վերելքին նոր լիցք ստացավ նրա սիրտն ու հոգին։ Շատ երջանիկ էր բազմավաստակ մշակը, քանի որ ինքը հայաջինջ սպանդից վերապրող այն սակավաթիվ մտավորականներից մեկն էր, որ արժանացել էր իր հարազատ հայրենիքի տեսությանը։ Ցնցած իր պատկառելի տարիքին Ալպոյաճյանը մեծ սիրով աշխատակցում էր Հայաստանի Գիտ. ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդեսին» և ուսումնասիրություն էր պատրաստում «Բանբեր Մատենադարանի» գիտական նյութերի ժողովածուի առաջիկա համարի համար։

1959 թ. նշվեց Ալպոյաճյանի 80-ամյակը։ Նա շարունակում էր իր բեղմնավոր աշխատանքը և 1961 թ. վերջերին հրատարակում երեք կարևոր աշխատություններ, իսկ նրա այլ գործերը տպագրության ընթացքի մեջ էին։ Նա մինչև վերջերս աշխատում էր լրացնել դեռևս 1899—1900 թթ. սկսած հայկական բարձրագույն աթոռների գավազանագրքերը, որոնք բացի անմիջական դերից մեծապես օգտակար կարող են լինել հայ ժողովրդի պատմության ժամանակագրական այլն այլ հարցեր ճշգրտելու և պարզելու համար։ Նա լրացումներ էր կատարում նաև դեռևս 65 տարի առաջ սկսած իր գործերի վրա, սակայն մահը խանգարեց նրան տեսնել իր քրտնաջան աշխատանքների ամբողջական հրատարակումը։ Ալպոյաճյանը իր ծննդյան 80-ամյակի առիթով ասել է. «Իմ մեծագույն իղձս է մինչև կյանքիս վերջին օրը հավատարիմ մնալ հավիտենական ուսանողության ոգուն. և ըստ մորս պատվերին միշտ աշխատիլ հոգ չէ թե այդ աշխատանքը պարտպի իսկ երթա։

Ինձի համար մեծագույն բախտավորություն պիտի ըլլա, եթե մահը զիս գտնե գլուխս սեղանի մը վրա հակած և գրիչը ձեռքս»։

Այդպես էլ անվանի գիտնականը մինչև վերջ մնաց պատեհի վրա և կարևոր գործերով հարստացրեց հայ պատմագրության գանձարանը։

Պետք է հուսալ, որ համապատասխան սփյուռքահայ կազմակերպությունները լրջորեն կմտահոգվեն հանդուցյալ բազմավաստակ գիտնականի թողած գիտական հարուստ ժառանգության տպագրությամբ և հասարակայնության սեփականությունն կդարձնեն դրանք։

Արշակ Ալպոյաճյանի, հայրենասեր մեծանուն հայագետի հիշատակն ու թողած արժեքավոր ժառանգությունը միշտ կհիշվեն խոր երախտագիտությամբ։

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ